

**Դավիթ Գյուլգատյան, Գրական արևելահայերենի
արտահայտաբանություն, Եր., Գլոբալ համալսարանի
հրատ., 2015, 296 էջ*:**

Բանալի բառեր – լեզվաբանություն, նկարագրական
քերականություն, նորմատիվ տեսական քերականություն,
դասագիրք, ինքնուսույց, Գ. Ջահուկյան, եզրույթ, լեզվաոճ:

Արտահայտաբանությունը նկարագրական քերականության բաժին-
ներից է՝ երեք ենթաբաժիններով՝ հնչաբանություն, գրաբանություն, շար-
ժաբանություն: Նկարագրական քերականությունը՝ որպես լեզվաբանական
բնագավառ, լեզվի ուսումնասիրության բավականին հավակնոտ հարթակ
է, քանի որ ըստ էության ենթադրում է սահմանել ոչ թե մեկ մասնավոր
լեզվի բնութագրություն, այլ այնպիսի չափանիշներ կամ դիտանկյուններ,
որոնցով հնարավոր է բոլոր լեզուները ներկայացնել: Նրա սահմաններում
լեզվի բնութագրություն կազմելը բարդ է այնքանով, որ նկարագրական
և նորմատիվ տեսական քերականությունների սահմանը մի տեսակ տար-
տամ է, և միշտ կա վտանգ այդ երկուսը կամ միահյուսելու, կամ ուսումնա-
սիրության անորոշ պատկերի հանգելու:

Լեզուների քերականական ուսումնասիրությունները ինքնանպատակ
չեն և չեն կարող այդպիսին լինել, հակառակ դեպքում դրանք գիտությու-
նից դուրս ինչ-որ շարադրանքների կարող են վերածվել, քանի որ գիտու-
թյան կոչումը իրականությունն ուսումնասիրելն ու հանրային զարգացման
համար կիրառելի լինելն է: Սա թույլ է տալիս պնդել, որ **ցանկացած լեզ-
վի քերականության բնութագրություն պատասխանատու է տվյալ լե-
զուն կրողի գրագիտության ու այդ լեզվով հետաքրքրվողի ճանա-
չողության ընդլայնման համար:**

Որևէ լեզվի նկարագրական քերականությունը կազմելիս լեզվաբան-
ները փորձում են այն ընդհանուր լեզվաբանության սահմաններից փոխա-
դրել նաև առանձին լեզուների ուսումնասիրության ոլորտներ: Արտահայ-
տաբանությունն էլ փաստորեն առաքելություն է ստանում սովերազդելու
և մեկնելու լեզվական այն իրողությունները, որոնք չեն կարող ընդգրկվել,
ասենք, տվյալ լեզվի տեսական քերականության որևէ բաժնում:

Հայոց լեզվի արտահայտաբանության մասին առաջին անգամ խոսել է
Գ. Ջահուկյանը արդի հայերենի համակողմանի ուսումնասիրություն հան-
դիսացող՝ «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» (Երևան,

Ը (ԺԳ) փաթի, թիվ 3 (55), հավիս-սեպտեմբեր, 2016
ՎՎ համահայկական հանդես

*Ընդունվել է տպագրության 28.9.2015:

1974) աշխատության մեջ: Իսկ **Դ. Գյուլգատյանի**՝ նշված բնագավառը ներկայացնող «Գրական արևելահայերենի արտահայտաբանությունը» աշխատանքը (լույս տեսած 2015 թ.) նախատեսված է որպես դասագիրք և ինքնուսույց համապատասխան մասնագետների և պարզապես հայերեն սովորելու ցանկություն ունեցողների համար: Եթե հիշատակված առաջին գիրքը գիտական ընդարձակ հետազոտություն է, ապա երկրորդը փաստորեն լեզվական արտահայտությանը վերաբերող ուսուցողական աշխատություն է: Այդպիսի դասագրքի գաղափարը ինքնին հետաքրքրաշարժ է, քանի որ որպես, այսպես ասած, դասագրքային քերականություն, սովորաբար ներկայացվում է տեսական քերականությունն իր բաժիններով:

Գիրքը միանգամայն հաջողված ենք համարում. հեղինակն ամենայն հետևողականությամբ շարադրում է նյութը՝ որպես տեսություն, տրվում են դասի յուրացումն ամրապնդող և ըստ էության տվյալ թեմայի կորիզներն ամփոփող հարցեր, համապատասխան վարժություններ: Յուրաքանչյուր թեմայի սկզբում տրվում են առանցքային արտահայտություններ, ինչը կարևոր է որպես ուսուցման մեթոդ. այդպիսով կարծես սովորողի ուշադրությունն անմիջապես հրավիրվում է դասի առանցքային կետերի վրա:

Գիրքն ունի ներածություն, ամբողջ դասընթացը ներկայացվում է երկու բաժնով՝ երեքական դասափուլի ընդգրկմամբ: Առաջին բաժինը **«Հնչաբանությունն»** է («Գրական արևելահայերենի հնչյունական համակարգը», «Հնչյունափոխություն», «Ուղղախոսություն»): Երկրորդ բաժինը **«Գրաբանությունն»** է («Գրի ըմբռնումը և տեսակները», «Ուղղագրություն», «Կետադրության ներածություն. ակադեմիական գրագիտություն»): Նշենք, որ հեղինակն այս բաժնում առանձին ենթավերնագրի ներքո անդրադառնում է նաև հայերեն էլեկտրոնային գրատեսակներին («Համակարգչային գրատեսակներ»):

Բոլոր թեմաներում հեղինակը կարողանում է շնորհալիորեն համադրել հայերենի արտահայտական բնութագրությունը և ընդհանուր լեզվաբանական մոտեցումները: Ցանկալի կլիներ դասագրքում ընդգրկված տեսնել նաև արտահայտաբանության «Շարժաբանություն» բաժինը. կարծում ենք՝ սա արտահայտաբանության հենց այն յուրահատուկ բաժինն է, որին արժե ուշադրություն տրամադրել, հատկապես, որ սույն գրքի հեղինակը չի վարանում զուտ գրական արևելահայերենի բնութագրությունը ներկայացնել ընդհանուր լեզվաբանության, երբեմն նաև լեզվափոխափայտության ֆոնի վրա (և պետք է ասել՝ դա արվում է գիտական բարձրաճաշակությամբ):

Տվյալ աշխատության՝ որպես դասագրքի մեծագույն արժանիքներից մեկը, մեր կարծիքով, գրքում տրվող **թեմատիկ գրականության ցանկն** է, ինչը չափազանց օգտավետ է և՛ ուսանողի, և՛ բնագավառը հատկապես ինքնուրույն ուսումնասիրողի համար: Գիրքն ավարտվում է 2 մասից բաղկացած հավելվածով: «Հավելված 1»-ում՝ ծանուցագրից հետո, տրվում է բուն «Տերմինարան»-ը. սա հարմարավետ է դարձնում դասագրքի օգտագործումը՝ համակարգելով տեսական նյութի հիմնակետերը: «Հավելված 2»-ը հայկական գրատեսակների պատկերների համախումբ է, և դա փաստորեն ուսուցման դիդակտիկ մեթոդի յուրատեսակ կիրառում կարելի է համարել:

Որպես կառուցվածքային համաչափության խախտում (գուցե աննշան) նկատենք, որ դասագրքի առաջին բաժինը սկսվում է բնաբանով (**Վ. Ֆոն Հումբոլդտի**՝ խոսքի հնչյունի վերաբերյալ դիպուկ դատողությամբ), մինչդեռ երկրորդ բաժինը բնաբան չունի: Կարծում ենք՝ գեղեցիկ կլինե՞ր երկու բաժինն էլ սկսել բնաբանով կամ ամբողջ դասագրքի համար սահմանել մեկ ընդհանուր բնաբան (սա, իհարկե, կլինե՞ր անսովոր, բայց չէ՞ որ ամենայն սովորական իրողությունն սկիզբ է առնում առաջին անսովորից):

Գիրքը տեղ-տեղ հեռանում է դասագրքային լեզվառձից. հեղինակը երբեմն շարադրանքը ներկայացնում է խրթին լեզվով՝ երկարաշունչ նախադասությունների կամ, այսպես ասած, մտքային ոլորանների կառուցվածքով, օրինակ՝ «Մակայն, ինչպես իրավացիորեն նկատված է, պայմանական բաժանում է սա, որովհետև գրավոր շարադրանքը բանավոր խոսքի բազմազանությանն ու նրբություններին առավելաչափ համապատասխանեցնելու համար ստիպված ենք լինում զուտ կառուցվածքային նշանակությամբ կիրառվող կետադրական նշանները ևս հարմարելու առոգանական դրսևորումներին, ինչպես նաև գրավոր խոսքում նշելու համար ստիպված ենք լինում հարմարելու կառուցվածքային տրոհումներին» (էջ 239), «Բայց անգամ այն դեպքում, երբ, դիմումի բովանդակության հրատապությունից ելնելով, դիմումնատուն պատասխանն ստանում է դիմումը գրած օրը, դարձյալ երկխոսությունը համաժամանակյա չէ, որովհետև գրավոր հաղորդակցությունն ինքնին տարաժամանակություն է ենթադրում. ընդունող կողմը նախ՝ պիտի կարդա, ապա՝ մակագրի՝ հիմնավորմամբ ընդունելով կամ մերժելով դիմումի շարադրանքում արտահայտված խնդրանքը» (էջ 257) և այլն:

Սովորաբար դասագրքում տրվում են ակադեմիական պարզություն ու ճշգրտություն ունեցող ձևակերպումներ. արժե, որ դասագրքի հեղինակը սահմանափակված լինի իր սեփական հայեցակետերն ու մոտեցումները ներկայացնելու հարցում: Այս առումով Դ. Գյուլգաստյանին երբեմն չի հաջողվել խուսափել տվյալ հարցի վերաբերյալ սեփական տեսակետը զարգացնելուց (մանավանդ որ ներկայացվող բնագավառը բավականին գաղթակղիչ է), ինչպես նաև այլևայլ ձևակերպումների մասին անհատական վերաբերմունքը կամ գնահատականը տալուց, օրինակ՝ «Կա տեսակետ, թե պատկերագրական հաղորդակցությունը նախորդել է բանավոր խոսքին: Դժվար է համաձայնել այս մտքին, քանի որ պատկերել կարենալու համար, թվում է, մարդ արդեն լեզու պիտի ունենար: Հազիվ թե հնարավոր լինե՞ր պատկերման ունակություն առանց հասկացական հիմքի, այսինքն՝ լեզվական համակարգի տրամաբանական շերտի» (էջ 166), «Երկակի հնչողությամբ բառերն անվանում ենք զուգահույժ բառեր» (էջ 157) և այլն:

Դասագրքայնությունից այդտեսակ շեղումները, անկասկած. օգտակար կարող են լինել տվյալ բնագավառն ուսումնասիրող մասնագետի համար, ընդգծենք՝ մասնագետի:

Անդրադառնանք նաև եզրույթային կիրառություններին: Եզրույթները սովորաբար կոչված են մատչելիորեն և ճշգրիտ նշանակելու որևէ իրողություն, դրանք կիրառվում են, որպեսզի գիտական կամ ակադեմիական ոճերում ապահովեն լեզվական խնայողություն, այսինքն՝ դրանց կիրառու-

թյունը ներկայացվող նյութը որքան հնարավոր է հակիրճ ու պարզ մատուցելու համար է: Մեզ հետաքրքրած դասագրքում կիրառված եզրույթների վերաբերյալ մեր կարծիքը հակասական է. մի կողմից՝ հանդիպում են այնպիսի եզրույթներ, որոնք լրիվ նոր գործածություններ են լեզվաբանության մեջ և չափազանց հաջողված են որպես եզրույթներ. բարեհունչ են, տվյալ հասկացության համար համընդգրկուն, ինչպես, օրինակ՝ վանկակազմ, վանկակազմիչ, վանկապարպում, վանկաբացում (տես էջ 100-101) և այլն: Սակայն հանդիպում են նաև այնպիսի եզրույթներ, որոնք թեև բարեհունչ են ու համընդգրկուն, բայց դժվարությամբ են հասկացվում, յուրացվում, օրինակ՝ շեշտառկալիս հնչյունափոխություն, շեշտանկալիս հնչյունափոխություն (տես էջ 74) և այլն: Գրքում հանդիպում են նաև ինքնաշեն այնպիսի եզրույթներ, որոնք պարզապես բարդ են կառուցված, օրինակ՝ շեշտարկման հայրնտել, ազգընտել հարմարակում (տես էջ 144): Գուցե արժեք առավել պարզ եզրութային դաշտով ներկայացնել ուսուցանվող նյութերը՝ նկատի ունենալով գրքի առաքելությունը:

Դ. Գյուլզատյանի «Գրական արևելահայերենի արտահայտաբանությունը» աշխատության վերաբերյալ մեր կարծիքն ամփոփելով՝ հանգում ենք հետևյալին. եթե դասագրքից դուրս բերվեն բոլոր վարժություններն ու ամփոփող հարցերը, կստացվի լեզվաբանական գիտական լուրջ ու գրավիչ աշխատություն, իսկ եթե թողնենք բոլոր առաջադրանքներն ու հարցերը՝ դուրս անելով ամբողջ տեսական շարադրանքը, կստացվի գործնական աշխատանքների համար նախատեսված ձեռնարկ, ընդ որում եզակի: Սա նշանակում է, որ Դ. Գյուլզատյանի հեղինակած այս դասագիրքը օժտված է բարձրորակությամբ թե՛ դասընթացն ամրապնդող գործնական առաջադրանքների առումով, թե՛ դասանյութի տեսական շարադրանքի առումով: Գուցե որպես ուսուցման համար նախատեսված ձեռնարկ այս գրքի ոճն ու լեզուն որոշ իմաստով խրթին է, բայց միևնույն ժամանակ հեղինակը հենց դրա շնորհիվ հասնում է նրան, որ ընթերցողի միտքը ոչ թե մեխանիկորեն հետևում է ընթացքին և նույնքան մեխանիկորեն կլանում նոր գիտելիքը, այլ աշխատեցնում է սեփական միտքը, և խթանվում է անհատական վերլուծական հմտությունների զարգացումը:

Շարադրանքի մտային հղկվածության և նյութի տրամաբանական հաջորդականության շնորհիվ գիրքը կարող է ծառայել ոչ միայն որպես դասագիրք, այլ նաև պարզապես որպես մասնագիտական ընթերցման նյութ:

Սիրանուշ Գ. Հովհաննիսյան
Բանաս. գիյր. թեկնածու

Summary

David Gyulzatyan. The doctrine of the expression of the literary Eastern Armenian language. Yerevan, “Global University”, 2015, 296 pp.

Siranush G. Hovhannisyanyan

Key words – linguistics, descriptive grammar, normative theoretical grammar, textbook, manual for self-tuition, G. Jakhukyan, term, language style.

The article discusses the book of D. Gyulzatyan “The doctrine of the terms of the literary Eastern Armenian language”, published in Yerevan in 2015. There is given a description of the book, some linguistic and stylistic features, there are highlighted some of the main advantages of the book, and comments are made. The book consists of the theoretical material solidly outlined and a set of various practical tasks to strengthen the material. It is concluded that this work of D. Gyulzatyan may be important for both students and researchers to the scope presented in this manual for self-tuition.

Резюме

Давид Гюльзатян. Учение о выражении литературного восточноармянского языка. Ер., «Университет Глобал», 2015, 296 с.

Сирануш Г. Оганесян

Ключевые слова – лингвистика, описательная грамматика, нормативная теоретическая грамматика, учебник, самоучитель, Г. Джаукян, термин, языковой стиль.

В рецензии рассматривается книга Д. Гюльзатяна “Учение о выражении литературного восточноармянского языка”, изданная в Ереване в 2015 году. Описывается структура книги и охват материала, указываются ее некоторые языковые и стилистические особенности, подчеркиваются главные достоинства книги, а также делаются замечания. Книга состоит из солидно изложенного теоретического материала и набора разнообразных практических задач для закрепления материала. Делается вывод, что данная работа Д. Гюльзатяна может быть полезной как для учащихся, так и для исследователей области, представленной в этом учебнике.

ԳՐԱԴԱՐԱՆԱԳՅՈՒՆՆԵՐ

Ը (ԺԳ) ԳՄՐԻ, ԵՐԿՆ 3 (55), ԽՈՐՀԱՆՈՒՄԻՆԻՍՏԻԿԵՐ, 2016

ՎԷՎ ԽԱՆԻԿԱԳՐԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԱՆ